ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

2025 թվականի մայիսի 02-ին՝ ժամը 12:00-ին Դիլիջանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ *Դիլիջան համայնքի 2026 թվականի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հայտերի վերաբերյալ հանրային քննարկում:*

Քննարկումը սկսեց Դիլիջան համայնքի ղեկավար՝ Դավիթ Սարգսյանը, ով ներկայացրեց Դիլիջանի համայնքապետարանի կողմից առաջարկվող հայտերը.

1. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում հանրային լողավազանի կառուցում»
2. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 4 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում (հասցեներ՝ Այգեստան 2Բ, Գայի 76, Գետափնյա 80, Շամախյան 3Ա)»
3. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում»
4. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան 17/30 հասցեից մինչև Պարզ լճի փողոց 19/12 հասցեն և Սայաթ-Նովայի 152 հասցեից մինչև Աղստև ընկած հատվածը ջրահեռացման համակարգի կառուցում»:

Քննարկման ընթացքում Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Լիպարիտ Սանթրոսյանը հարց բարձրացրեց կապված Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոցի հիմնանորոգման հետ:

Համայնքի ղեկավար՝ Դավիթ Սարգսյանը նշեց, որ համայնքի 2026 թվականի սուբվենցիոն ծրագրերը ընտրվել են ըստ անհրաժեշտության և հրատապության, սակայն Սայաթ-Նովայի փողոցի հիմնանորոգումը ևս կարևոր է համայնքի ենթակառուցվածքների զարգացման տեսանկյունից, նամանավանդ վերոնշյալ փողոցը համարվում է համայնքային ամենաերկար փողոցը, որը հիմնանորոգման կարիքն ունի: Համայնքի ղեկավարը ավելացրերց, որ անհրաժեշտ է լրամշակել սուբվենցիոն ծրագրերի փաթեթը և ավելացնել «Սայաթ-Նովայի փողոցի ասֆալտապատում և մայթերի հիմնանորոգում» ծրագիրը:

Մասնակիցների կողմից քննարկվեցին առկա ծրագրերը, հարց ու պատասխանի միջոցով դրանք առավել հստակեցվեցին, որից հետո մասնակիցները տվեցին իրենց հավանությունը հետևյալ ծրագրերին՝

1. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում հանրային լողավազանի կառուցում»

2. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 4 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում (հասցեներ՝ Այգեստան 2Բ, Գայի 76, Գետափնյա 80, Շամախյան 3Ա)»

3. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում»

4. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան 17/30 հասցեից մինչև Պարզ լճի փողոց 19/12 հասցեն և Սայաթ-Նովայի 152 հասցեից մինչև Աղստև ընկած հատվածը ջրահեռացման համակարգի կառուցում»
5. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մ.Գորկու 54/1 հասցեից մինչև Սայաթ-Նովայի 73 հասցեն և Սայաթ-Նովայի 73 հասցեի հատման կետից մինչև Սայաթ-Նովայի 209 հասցեն ընկած ճանապարհահատվածի ասֆալտապատում և մայթերի հիմնանորոգում»

Քանի որ այլ առաջարկություններ և առարկություններ չհնչեցին, քննարկման վարող և պատասխանատու՝ Դավիթ Սարգսյանը նիստը համարեց ավարտված:

Քննարկման վարող և պատասխանատու

Դիլիջան համայնքի ղեկավար՝ Դավիթ Սարգսյան _____

Արձանագրող

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի

Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և

հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ՝ Վարդան Մկրտչյան _____